Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Լևոն Աշոտի Հովնանյանի «ՀՀ ներդրումային շուկայի զարգացման արդի հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Տնտեսության և հասարակության զարգացումը, ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձին տնտեսավարող սուբյեկտների տեսնակյունից՝ մեծապես կախված է ներդրումների ներգրավման հնարավորություններից: Անվիճելի է, որ ցանկացած երկրում ներդրումների ներգրավման մակարդակն էական ազդեցություն է գործում սոցիալ-տնտեսական իրավիճակի, այդ թվում՝ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների՝ տնտեսական աճի, ազգային եկամտի և զբաղվածության մակարդակների վրա: Ավելին, տնտեսության ընդլայնված վերարտադրության գործընթացի ապահովումը՝ նոր արտադրական հզորությունների գործարկումը, նոր աշխատատեղերի ստեղծումը և ենթակառուցվածքների զարգացումն անհնար է առանց տվյալ երկրում իրական կապիտալ ներդրումների ներգրավման:

Հայաստանի Հանրապետության ներդրումային շուկայի վերլուծությունը վկայում է, որ վերջինս աչքի չի ընկնում բարձր ակտիվությամբ, իսկ տնտեսության մեջ ներդրումային հոսքերը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո կայուն նվազման միտումներ են ունեցել: Վերջինս հիմնականում պայմանավորված է մեր երկրի ներդրումային շուկայի ոչ բավարար զարգացվածությամբ, ներդրումային միջավայրի ցածր գրավչությամբ և պետական ներդրումային քաղաքականության ցածր արդյունավետությամբ:

Ներդրումային շուկայի զարգացման համար նախևառաջ անհրաժեշտ է բացահայտել ոլորտում առկա հիմնախնդիրները և դրանց լուծման առանձնահատկություններից ելնելով մշակել այս ոլորտում պետական ներդրումային քաղաքականության գերակա ուղղությունները:

Վերոգրյալ խնդիրների լուծմամբ էլ պայմանավորված է սույն ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և հիմնական խնդիրները

Հետազոտության հիմնական նպատակը՝ Հայաստանի Հանրապետության ներդրումային շուկայի զարգացման հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծման ուղիների մշակումն է: Նշված նպատակի իրականացումը ենթադրում է որոշակի խնդիրների և դրանց լուծումների առաջադրում, մասնավորապես.

- դիտարկել ներդրումների տնտեսական բովանդակությունը և ներդրումային գործընթացի կառուցվածքային առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում,
- ուսումնասիրել ներդրումային շուկայի կառուցվածքը, կազմակերպչական առանձնահատկությունները և գործունեության մեխանիզմները,
- պարզաբանել պետական ներդրումային քաղաքականության դերը ներդրումային շուկայի ձևավորման և կարգավորման գործում,
- ուսումնասիրել ներդրումային շուկայի կարգավորման արտերկրյա առաջավոր փորձը և բացահայտել ներդրումային շուկայի կառուցվածքային առանձնահատկությունները ՀՀ-ում,
- վերլուծել ներդրումային հոսքերը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների շարժընթացը և դրանց փոխառնչությունները ՀՀ-ում,
- ուսումնասիրել Հայաստանի ներդրումային շուկայի զարգացմանը խոչնդոտող գործոնները և վերլուծել այդ ոլորտում առկա հիմնախնդիրները,
- բացահայտել ներդրումային շուկայի զարգացմանը միտված պետական ներդրումային քաղաքականության հիմնական ուղղությունները:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և չորս հավելվածից: Ատենախոսության առաջին գլխում («Ներդրումային շուկայի էությունը և գործունեության առանձնահատկությունները») ներկայացվել է ներդրումային շուկայի առանձնահատկությունները, ինչպես նաև վերջինիս ինստիտուցիոնալ կառուցվածքը:

Աշխատանքի երկրորդ գլուխը («Ներդրումային շուկայի կարգավորման առանձնահատկություններն արտերկրում և ՀՀ-ում») նվիրված է ներդրումային շուկայի կարգավորման առանձնահատկությունների վերլուծությանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ներդրումային շուկայի վերլուծությանն ու առանձնահատկությունների բացահայտմանը:

Ատենախոսության երրորդ գլխում («Ներդրումային շուկայի զարգացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում») ներկայացվել է Հայաստանի ներդրումային շուկայի զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոնները, ոլորտում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև ներդրումային քաղաքականության բարելավման ուղիները Հայաստանի Հանրապետությունում՝ ներդրումային շուկայի զարգացման համատեքստում:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը

Ատենախոսության գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, հանգում են հետևյալին.

- Հստակեցվել և համակարգված ներկայացվել են ՀՀ ներդրումային շուկայի զարգացմանը խոչընդոտող գործոնները, որոշակիացվել է ներդրումային արտոնությունների հասցեականությունը, ներդրումների արդյունավետությունը բարձրացնելու նկատառումներով՝ ներդրումային գործընթացի շրջանակում ներդրումային գործունեության մակարդակի և որակի կարևորագույն չափորոշիչները և դրանց առանձնահատկությունները:

- Ներդրումների արդյունավետությունը գնահատելու նպատակով կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծության հիման վրա պարզաբանվել է համախառն ներքին ներդրումների ազդեցությունը ՀՀ համախառն ներքին արդյունքի, ապրանքաշրջանառության և արտահանման վրա և բացահայտվել է, որ եթե ՀՆԱ-ՀՆՆ, առևտրաշրջանառություն - ՀՆՆ կապի դեպքում էլաստիկության գործակցի արժեքը կիրառելի է, ապա արտահանում - ՀՆՆ կապի դեպքում՝ կիրառելի է վերապահումով:
- Պարզաբանվել են պետական ներդրումային քաղաքականության հիմնական հատկանիշները, որոնք հանգում են հանրային շահին պետական ներդրումային քաղաքականության ուղղվածությանը, ներդրումային պայմանների և նախադրյալների համակարգի ձևավորմանը, պետության ներդրումային գործունեության հստակ դիրքորոշմանը, կանխատեսվող ներդրումային քաղաքականության և կապիտալ ներդրումների ոլորտային առաջնահերթությունների սահմանմանը:
- Միջազգային վարկանիշավորող կազմակերպությունների գնահատականների և փորձագիտական հարցումների հիման վրա տրվել է ՀՀ ներդրումային միջավայրի գրավչության գնահատականը, համակարգվել և ներկայացվել են պետական ներդրումային քաղաքականության բարելավման հիմնական ուղղությունները, դրանց շրջանակում իրականացվելիք միջոցառումները՝ ներդրումների ներգրավման, սպասարկման և աջակցման ինստիտուցիոնալ մեխանիզմների կատարելագործման հենքի վրա:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքը որոշակի գիտագործնական արժեք ներկայացնելու հետ մեկտեղ զերծ չէ նաև որոշակի թերություններից, մասնավորապես.

1. ՀՀ ներդրումային միջավայրի բարելավման տեսանկյունից առավել նպատակահարմար է ներդրումները դասակարգել ըստ տարբեր հայտանիշների և դրանցից յուրաքանչյուրի համար (պորտֆելային, օտարերկրյա ուղղակի և այլն) տնտեսական համակարգի տարբեր մակարդակներում՝ միկրո, մակրո, մեզո,

ներկայացվեին արդյունավետ ներդրումների սահմանափակումները և դրանց բարելավման ուղիները:

2. Արդի ժամանակաշրջանում, երբ հստակորեն դրսևորվում է համաշխարհային աշխարհաքաղաքական տնտեսության ինստիտուցիոնալ միաբևեռ համակարգի անցումը բազմաբևեռի, ինչպիսի՞ փոփոխությունների կենթարկվեն համաշխարհային ներդրումների գերակա ուղղությունները և այդ գործընթացում ի՞նչ տեղ և դեր կունենա ՀՀ տնտեսության ներդրումային ինստիտուցիոնալ համակարգը:

3. Սեղմագրի 6-րդ էջում նշվում է «միկրոմակարդակում ներդրումները ենթադրում են տնտեսական գործունեության մեջ միջոցների ցանկացած ներդրում ապագայում շահույթ ստանալու նպատակով»: Ցանկացած եզրույթի (տվյալ դեպքում ներդրման) սահմանման մեջ նորից օգտագործվում է "ներդրում" եզրույթը, դա նույնն է, որ հավասարումների համակարգի լուծման արդյունքում նորից ստանում ենք անհայտ մեծություն, որը մեթոդաբանական տեսանկյունից սխալ է:

4. Ատենախոսության 24-րդ էջում նշվում է «ներդրումների ներգրավման և գործարքային ծախքերի փոխազդեցության մասին» բայց չեն պարզաբանվում դրանց փոխազդեցության մեխանիզմները և փոփոխման միտումները:

Եզրակացություն

Վերոհիշյալ դիտողությունները էապես չեն կարող բացասական ազդեցություն թողնել հետազոտության արդյունքների վրա: Լևոն Աշոտի Հովնանյանի ատենախոսությունն ունի որոշակի գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար որոշակի գիտագործնական ուղղվածություն ունեցող հիմնախնդիրներ:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են 7 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները: Ատենախոսությունը գրված է մասնագիտական բավական բարձր մակարդակով:

Ընդհանուր առմամբ, Լևոն Աշոտի Հովնանյանի «Ներդրումային շուկայի *զարգացման արդի հիմնախնդիրները*» թեմայով ատենախոսությունը *համապատասխանում* է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ **Ս. Դավոյան**

Պարոն Ս.Դավոյանի
Ստորագրությունը հաստատում եմ
ԵՊՀ գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու **Մ.Վ. Հովհաննիսյան**

28.06.2022թ.